ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIK OF ARMENIA
ARMAVIR MARZ
MIASNIKYAN MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73

Թիվ 011

09.02.2012թ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝*
*Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*Հարգարժան պարոն մարզպետ*

Ձեզ ենք ուղարկում 2012թվականի հունվարին Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքի ղեկավարի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր „5„ թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ա. Պետրոսյան

13 02 2012
1394-12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17.01.2012թ. ԹԻՎ-1

## ՎԱՐԴՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով N 511814 անաշխատունակության թերթիկը և Վ.Հովհաննիսյանի 2012թվականի հունվարի 16-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի գրադարանի գրադարանավարուհի Վարդուհի Վահրամի Հովհաննիսյանին հատկացնել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր ժամանակով:
2) Վ.Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի հունիսի 4-ին:
3) Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Կ.Տ.
Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

,,01,, հունվարի 2012 թվական
գ.Մյասնիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

**ԹԻՎ -01** **„12„ Հունվարի 2012թ.**

## *ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով.

*Որոշում եմ՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 2012 թվականի ամենամյա վճարովի արձակուրդի տրամադրման հերթականության նախնական ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կ.Տ.

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

„12„ հունվարի 2012 թվական

գ.Մյասնիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

---

**ԹԻՎ -02** „19„ Հունվարի 2012թ.

## ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2012 թվականի հունվարի 19-ին Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքում կայացած աճուրդ վաճառքի արդյունքները.

*Որոշում եմ՝*

1.Հաստատել Հայաստանի Հանիապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքում կայացած 0,015 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողատարածքի վաճառքի արդյունքները:

2.Աճուրդում հաղթած անձի՝ Պատվական Մազմանյանի հետ կնքել օտարման պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կ.Տ.

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

„19„ հունվարի 2012 թվական
գ.Մյասնիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ -03 „20„ Հունվարի 2012թ.

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ , տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի օգոստոսի 9-ի N 09-Ն հրամանով կատարված փոփոխությունները և լրացումները.

*Որոշում եմ՝*

1)Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակազմի կարգապահական ներքին կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2)Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 13 որոշումը:
3)Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ (Ա.Խաչատրյանին) իրազեկել աշխատակազմի աշխատակիցներին:
4)Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կ.Տ.
Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

„20„ հունվարի 2012 թվական
գ.Մյասնիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

**ԹԻՎ -04** „26„ Հունվարի **2012թ.**

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2381-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ՝ Զաքել Բռոյանին սեփականության իրավունքով 10-001 ծածկագրի բնակելի տանը հասցե տալու մասին դիմումը.

*Որոշում եմ՝*

1.Մյասնիկյան համայնքի բնակիչ՝ Զաքել Էդվարդի Բռոյանին պատկանող 10-001 ծածկագրի բնակարանին տալ <<Արմավիրի մարզ, Մյասնիկյան համայնք ,Ավետիսյան 2>> հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

„26„ հունվարի 2012 թվական
գ.Մյասնիկյան